ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«07» մայիսի 2010թ. N- Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 605-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 309-Ա և 2010 թվականի ապրիլի 8-ի N 418-Ն որոշումները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող (պետական գրանցման վկայական՝ N 2541286, տրված՝ 10.06.2009 թ.) Երևան քաղաքի Ա. Սարգսյան 8 հասցեում գտնվող՝ 637.5 քառ. մետր մակերեսով՝ չորրորդ աստիճանի վնասվածությամբ շենքը և դրա սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ 0.047508 հեկտար հողատարածքը:

2. Որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող Երևան քաղաքի Քանաքեռի 14-րդ փողոցի N 38/1 բազմաբնակարան շենքը և 1365,14 քառ. մետր մակերեսով հողատարածքը՝ Երևան քաղաքի Մարգարյան փողոցի N 37՝ քանդման ենթակա վթարային բազմաբնակարան շենքից վերաբնակեցման ենթակա ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու պայմանով:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ իրականացնել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 309-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող (պետական գրանցման վկայական՝ N 2541286, տրված՝ 10.06.2009 թ.) Երևան քաղաքի Ա. Սարգսյան 8 հասցեում գտնվող՝ 637.5 քառ. մետր մակերեսով՝ չորրորդ աստիճանի վնասվածությամբ շենքը և դրա սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ 0.047508 հեկտար հողատարածքը նվիրվել է Երևանի քաղաքային համայնքին:

ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 418-Ն որոշմամբ Երևան քաղաքի Մարգարյան փողոցի N 37՝ քանդման ենթակա վթարային բազմաբնակարան շենքից վերաբնակեցման ենթակա ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Երևանի քաղաքապետարանին հատկացված միջոցներով կառուցված՝ Երևան քաղաքի Քանաքեռի 14-րդ փողոցի N 38/1 բազմաբնակարան շենքը և 1365,14 քառ. մետր մակերեսով հողատարածքը նվիրաբերվել է Երևան քաղաքին՝ նշված ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու պայմանով:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսդրության պահանջների՝ պետության կողմից նվիրվող կամ նվիրաբերվող գույքի ընդունման համար անհրաժեշտ է Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշումը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք ընդունելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. Բ Ե Գ Լ Ա Ր Յ Ա Ն